զԴաւիթ Հալապցին, զԱստուածատուր Վանցին, զՆիկողոս Թուլկուրանցին, որ վէքիլ ասացաւ Թումային, զերեքեան վարդապետքս նախատանօք յեկեղեցեացն արտաքսեցին։ Եւ սկսան ի խորհուրդ աւուրքք բազմօք սինհոդոսաւ ժողովաւ իւրեանց եթէ զնասցեն առ վէզիրն արվի գանկատի՝ չկամենալոյ զԹումային պատրիարքութիւն ի վերայ իւրեանց, կամ աքսորեսցեն և կամ սպանցեն։ Եւ ընտրեալ արս Ը կարգաւոր և անկարգ՝ առաքեցին յէտրէնէ առ դրունս և յերգս[1]) բռնաւորաց անկանիլ. և նոքա գնացին, աստ և անդ չատ դիպեցան, բայց ոչ կարացին առ երեսս մեծ իշխանին ելանել, այլ ի փոքրագունից և ի նախարարաց նոցին գանեալք լինէին, և այլք ի փախուստ դառնային եւ զմիմեանս կորուսեալք, յետ Մայիսի ամսոյ ԺԷ–էս երևէին ապա և մի մի։

Մայիսի Դ. փոխեաց վէզիրն զՊեօր Հասան փաշան և հրամայեաց զի նստցի զայմախամ Մէլէկ Ահմէտն, մինչև անտի առաքեսցէ զայլ ոմն։

Եւ ահայ եկն Մայիսի ԺԲ[2]). յաւուր Դշի զայմախամ Սինան փաշա որ կայր յէտրէնէ՝ նստեալ մանզուլ ի պօստանճիպաշութենէ, եւ բաղում ընչից տէր գոլով, զի հինաւուրքք էր. տեսեալ վէզիրին զայն՝ էառ բաղում քսակս ի նմանէ եւ առաքեաց զայմախամութիւն (Ընբէ)։

Իէ Մայիսի եկեալ պատրիարքն և եմուտ ի քաղաքս և մտեալ առ փաշան։ Եւ երթան աթոռակալք և իշխանք առ փաշան թէ Զեմք կամիր զտիրութիւն դորա ի վերայ մեր՝ կրկին անգամ, մինչև զայրանալ փաշային, ի բաց հանէր զնոսա յերեսաց իւրոց։ Եւ պատրիարքն երթայր ընդ պօստանճի խասէքոյն եւ

1) յերթս. 2) ԺԳ.